


ԿԼԻՄԱՅԻ ՓՈՓՈԽՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՅԸ

Վերջին 200 տարվա ընթացքում մարդու գործունեության հետևանքով մթնոլորտ են արտանետվել տարբեր տեսակի գազանյութեր, որոնք փոփոխություն են մտցրել էներգիայի հոսքի մեջ և որպես հետևանք երկիր մոլորակի վրա տեղի է ունեցել կլիմայի փոփոխություն: Մթնոլորտում գազերն առաջացնում են շերտ, ծածկոց, որը պահպանում է երկիր մոլորակը հասած արևի ճառագայթները: Այդ ճառագայթների մի մասը պետք է վերադառնան տիեզերք՝ ինֆրակարմիր ճառագայթների տեսքով: Մարդու գործունեության հետևանքով գազային ծածկույթը ավելացել է և արգելակել այդ ճառագայթների վերադարձը, ինչը երկիր մոլորակի վրա ստեղծել է ջերմային էֆեկտ: Դրա հետևանքն է օդային զանգվածների տեղաբաշխումը և երկրի կլիմայի փոփոխությունները, կլիմայի գլոբալ տաքացումը, որի կարգավորումը մեր երկրի համար հանդիսանում է կարևորագույն հիմնախնդիր:

Կլիմայի գլոբալ տաքացման հիմնախնդիրը ունի մի շարք առանձնակատկություններ, որոնք այն դարձնում են կարգավորման տեսանկյունից առավել բարդ:

- ☐ Հիմնախնդիրը կապված է մթնոլորտի հետ, որը համաշխարհային ընդհանուր սեփականություն է: Այդ առումով ոչ մի երկիր չի համարի անհրաժեշտ գազի արտանետումների էական կրճատումներ կատարելը իր գուտ ազգային շահը:
- ☐ Անհրաժեշտ գազի արտանետումների կրճատման պոտենցիալ իրավունքների փոխանցելի լինելը նշանակում է դրանց ազատ վաճառքը համապատասխան ձևավորված շուկայում:



1-ին աղբյուր 0 1 2 3 4 5 6 7 8 9 10 11 12 13 14 15

2-րդ աղբյուր 15 14 13 12 11 10 9 8 7 6 5 4 3 2 1 0

Այն թե ինչու է այն համակարգը ինքնաբերաբար բերում արդյունավետ տեղաբաշխման, երևում է վերը նշված գծագրից: Ենթադրենք առաջին ձեռնարկությունը, որի արտանետումների նվազեցման սահմանային ծխների կորը MC_1 -ն է, ի սկզբանե

վերը նշված խնդիրների քննարկումները սկսվեցին 1980-ական թթ; ստեղծվեցին 3 աշխատանքային խմբեր երկրի ուսումնասիրման համար:

1-ին խմբի նպատակն էր ցույց տալ, որ կլիմայի փոփոխությունները տեղի են ունենում, և ուսումնասիրել թե՛ այդ փոփոխությունները ինչով են պայմանավորված:

2-րդ խմբի նպատակն էր ուսումնասիրել կլիմայի փոփոխության հետ կապված ազդեցությունները այլ բնագավառների վրա (գյուղատնտեսության, ջրային ռեսուրսների և այլն):

3-րդ աշխատանքային խումբը պետք է ներկայացներ այն միջոցառումները, որոնք անհրաժեշտ էին հարմարվողականության բարձրացման համար: Կլիմային մարդու միջամտության մասին գիտական վկայությունը միջազգային արենայից առաջին անգամ հնչել է 1979թ. Կլիմայի համաշխարհային առաջին կոնֆերանսում: Քանի որ 1980-ական թվականներին հասարակայնության իրազեկությունն էկոլոգիական հիմնախնդիրների նկատմամբ շարունակում էր աճել, երկրները սկսեցին ավելի ուշադրություն դարձնել կլիմայի հիմնախնդրին: Մալթայի

կառավարության առաջարկությամբ 1988թ. ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան ընդունեց Մարդկության ներկա և ապագա սերունդների համար գլոբալ կլիմայի պահպանության մասին 43/53 որոշումը: Նույն տարում Օդերևութաբանության համաշխարհային կազմակերպության և ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագրի կառավարման մարմինները հիմնեցին մի նոր մարմին՝ Կլիմայի փոփոխության փորձագետների միջկառավարական խումբը (ԿՓՓՄԽ-IPCC), խնդրո վերաբերյալ գիտական տեղեկատվությունը կարգավորելու և գնահատելու համար: 1990թ. ԿՓՓՄԽ-ն հրապարակեց Գնահատման իր առաջին զեկույցը, որը եզրակացրեց, որ կլիմայի փոփոխության վտանգն իրական է: Կլիմայի համաշխարհային երկրորդ կոնֆերանսը, որը տեղի ունեցավ Ժնևում նույն տարում, կոչ արեց ընդունել գլոբալ համաձայնագիր: ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեան այդ կոչին արձագանքեց իր 45/212 որոշմամբ, որով պաշտոնապես հայտարարեց Կլիմայի փոփոխության մասին կոնվենցիայի բանակցային գործընթացի սկսելու մասին, որը պետք է վարեր Միջկառավարական բանակցային կոմիտեն (INC):

1992 թ. Ռիո Դե Ժանեյրոյում տեղի ունեցավ վեհաժողով, որտեղ ընդունվեց «Կլիմայի փոփոխության մասին» կոնվենցիան: «Կլիմայի փոփոխության մասին» ՄԱԿ-ի շրջանակային կոնվենցիան համախմբում է գլոբալ ջանքերը՝ ընդդեմ համաշխարհային տաքացման: Նրա նպատակն է ջերմոցային գազերի կոնցենտրացիան մթնոլորտում կայունացնել այնպիսի մակարդակով, որը բացառի կլիմայական համակարգի վրա մարդու կողմից կատարվող ազդեցությունը: Այս մակարդակին պետք է հասնել այնպիսի ժամանակահատվածում, որ էկոհամակարգերը բնական ճանապարհով հարմարվեն կլիմայի փոփոխություններին՝ հուսալով, որ պարենի արտադրության արտադրությունը չի վտանգվի տնտեսական զարգացմանը հնարավորություն կտրվի շարունակվել կայուն ձևով:

Կոնվենցիան շարադրում է որոշ դեկլարատոր սկզբունքներ. նախագրուշացնող սկզբունքը նշում է, որ գիտության որոշակի բացակայությունը չպետք է օգտագործվի որպես արդարացում գործողությունների հետաձգման համար, նրբ լուրջ, անդառնալի վտանգն արդեն առկա է:

Դիֆերենցիալ պարտավորությունների սկզբունքը կլիմայի փոփոխության դեմ պայքարում տալիս է զարգացող երկրներին;

Մյուս սկզբունքները կապված են զարգացող երկրների յուրահատուկ կարիքների և կայուն զարգացմանը՝ աջակցելու կարևորության հետ:

Ջերմոցային էֆեկտը պայմանավորված է մթնոլորտում ջերմոցային գազերի առկայությամբ: Ջերմոցային գազերն ունեն բնական ծագում և պայմանավորված են մարդու արտադրական գործունեությամբ: Բնական ծագում ունեն ջրի գոլորշիները, օզոնը, ածխաթթու գազը, մեթանը,

ագոտի օբսիդները և այլն: Արդյունաբերական գազերից են ածխաջրածինները, հեքսաֆտորիդները և այլն: Կոնվենցիայի բանակցությունները դժվարությամբ էին ընթանում, քանի որ չկար միասնական տեսակետ, թե ինչպիսին պետք է լինի կոնվենցիան և ինչ վերջնական նպատակ այն պետք է հետապնդի: Հիմնախնդիրը բարդանում էր նաև նրանով, որ այն շոշափում էր բազմաթիվ տնտեսական հետաքրքրություններ և մարդու գործունեության բազմաթիվ բնագավառներ: Ըստ բազմաթիվ տեսակետների կոնվենցիան պետք է ուղղված լիներ էներգիայի սպառմանը, քանի որ մթնոլորտ արտանետվող ածխաթթու գազի հիմնական մասի աղբյուրը հանածո վառելիքի այրումն է: Սակայն այն պետք է ընդգրկեր նաև տնտեսության այլ բնագավառներ՝ տրանսպորտ, արդյունաբերություն, գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն: Ակնհայտ էր, որ Կոնվենցիայի բանակցությունները կպահանջեն ընդունել զգալի սահմանափակումներ, միջոցառումներ, որոնք ամբողջ աշխարհում շեշտակիորեն պետք է ազդեին տնտեսական և սոցիալական գործունեության վրա: Հատկապես ակնառու էր զարգացած և զարգացող երկրների տեսակետների տարբերությունը: Զարգացող երկրները պահանջում էին հաշվի առնել տնտեսական զարգացման իրենց իրավունքը և դեմ էին արտանետումների կրճատման կամ սահմանափակման գաղափարին, քանի որ այն բացասաբար կանդրադառնար իրենց տնտեսական աճի վրա: Ըստ նրանց կլիմայի փոփոխությունը, հիմնականում, զարգացած երկրների տնտեսական գործունեության արդյունք էր, այդ պատճառով հիմնական պատասխանատվությունը պետք է նրանք ստանձնեն և միջոցառումներ իրականացնեն իրենց տարածքում: Միջոցառումների լայն սպեկտրին կողմնակից էին հատկապես փոքր կղզային պետությունները, որոնց տարածքի մեծ մասը գտնվում է ծովի մակերևույթից ոչ մեծ բարձրության վրա և համաշխարհային օվկիանոսի մակարդակի բարձրանալն առաջին հերթին սպառնալից կլինի նրանց համար: Մյուս կողմից, նավթ արտադրող երկրների համար անհանգստության առարկա էր, որ հանածո վառելիքի օգտագործման սահմանափակումը լուրջ հարված կհասցնի նրանց տնտեսությանը: Զարգացած երկրները ստանձնեցին հիմնական պատասխանատվությունը և խոստացան, որ կձեռնարկեն արտանետումների կրճատման միջոցառումներ: Նրանք համաձայնվեցին նաև օժանդակել զարգացող երկրների ջանքերին, սակայն հրաժարվեցին ստեղծել նոր ֆինանսական մեխանիզմ, հույս հայտնելով, որ այդ ֆունկցիան կկատարի 1991թ. ստեղծված Գլոբալ էկոլոգիական ֆոնդը: Շուտով հայտնի դարձավ, որ ժամանակի սղության պատճառով հնարավոր չէ սահմանել

արտանետումների քանակական սահմանափակումներ: Ելնելով զարգացած և զարգացող երկրների ընդհանուր, սակայն դիֆերենցված պատասխանատվության սկզբունքից, հնարավոր էր միայն ընդունել շրջանակային տեքստ և նրա հիման վրա զարգացնել հետագա գործունեությունը: Ռիո Դե Ժանեյրոյում կայացած վեհաժողովում ընդունված կոնվենցիան՝ «կլիմայի փոփոխության մասին» զարգացած երկրներին պարտավորեցնում էր կրճատել ջերմոցային գազերի արտանետումները: Առանձնացվեցին հետևյալ ջերմոցային գազերը՝ ածխաթթու գազ, ազոտի երկօքսիդ, մեթան, հիբրոֆտոր ջրածին. ժերֆտորջրածին, հեքսաֆտորիդ և այլն: Ռիոյում չքննարկվեց զարգացող երկրների պարտավորությունները: 1997 թ. Կիոտոյում երրորդ կողմերի կոնֆերանսում ընդունվեց «Կիոտոյի արձանագրությունը», որտեղ զարգացած երկրները ընդունեցին պարտավորություններ՝ ջերմոցային գազերը կրճատել 5%-ով՝ 1990 թ. համարելով որպես այս հաշվարկի սկզբնական տարի: Կիոտոյում ընդունվեցին ճկուն մեխանիզմներ, որոնք պետք է նպաստեին այդ պարտավորությունների կատարմանը: Այդ մեխանիզմներն էին.

1. համատեղ իրականացում
2. մաքուր զարգացման մեխանիզմ
3. արտանետումների առևտուր

Համատեղ իրականացումը թույլ էր տալիս զարգացած երկրների միջև բաջանել արտանետումների չափաբաժինները:

Մաքուր զարգացման մեխանիզմը զարգացող և զարգացած երկրների համագործակցությունն է: Զարգացող երկրները պետք է զարգացող երկրներին փոխանցեն նոր տեխնոլոգիաներ և տրամադրեն ֆինանսական աջակցություն, որով կկրճատեն արտանետումները:

2004 թ. նոյեմբերին Ռուսաստանը վավերացրեց «Կիոտոյի արձանագրությունը»: Ընդհանուր առմամբ պարտավորությունների կատարումը պետք է լիներ մինչև 2008-2012 թթ.: Հայաստանը այդ կոնվենցիան ստորագրեց 1992 թ. և վավերացրեց 2003թ.: Հայաստանը, որպես զարգացող երկիր չփուններ ջերմոցային գազերի կրճատման վերաբերյալ, բայց որպես մասնակից երկիր ուներ հետևյալ խնդիրները.

1. ներկայացնել ազգային ռեսուրս երկրի կլիմայի փոփոխությունների վերաբերյալ
2. ներկայացնել ազգային կադաստր ջերմոցային գազերի վերաբերյալ
3. ներկայացնել այն խնդիրները, որոնք կարող են ծագել կլիմայի փոփոխության հետևանքով
4. կատարել կրթադաստիարակչական միջոցառումներ:

Մթնոլորտի հետ կապված գլոբալ էկոլոգիական հիմնահարցերից է օզոնային շերտի քայքայումը: Այդ երևույթը պայմանավորված է արդյունաբերական արտանետումներով: 1987 թ.

Մոնոէալում ընդունվեց արձանագրություն, որի հիման վրա պետք է կրճատվեն ֆրիոնի և ծծմբանյութի արտադրությունը:

Գլոբալ էկոլոգիական խնդիրներից է մթնոլորտում թթու անձրևների առկայությունը: Այդ անձրևները պայմանավորված են ծծմբի և ազոտային միացությունների արտանետումներով:

Մթնոլորտն աղտոտումը բացասական ազդեցություն է թողնում մարդու առողջության վրա: Մթնոլորտը ունի պաշտպանողական ֆունկցիա, այն է՝ պաշտպանում է երկիրը արևի ճառագայթներից՝ օզոնային շերտ, և այնտեղ է ձևավորում կլիման: Մթնոլորտը ունի մի շատ կարևոր հատկություն, որն է ինքնամաքման հատկությունը: Մթնոլորտային զանգվածները շարժվելով քամու հոսանքներով ցրում են այն աղտոտիչները, որոնք հավաքվում են մթնոլորտում: Երբ մթնոլորտը աղտոտվում է մարդու արտադրական գործունեության հետևանքով արտադրված արտանետումներով, նրա ինքնամաքման մեխանիզմներն արգելակվում են, ինչը կարող է բերել ծանր էկոլոգիական հետևանքների:

Մթնոլորտի աղտոտումը լինում է՝ տեղական, տարածաշրջանային և գլոբալ: Աղտոտիչները լինում են՝ գազանման, հեղուկ և պինդ: Հատկապես վնասակար են ծանր մետաղները՝ կապարը, սնդիկը, պղինձը, և տրանսպորտային արտանետումները՝ բենզոպիրենը և այլն:

Կլիմայի փոփոխությունը մեծ ազդեցություն է թողնում կենսաբազմազանության վրա, ավելին՝ փոփոխության հետևանքով կարող են նույնիսկ բնաջնջվել կենսաբազմազանության որոշ ներկայացուցիչներ:

Կլիմայի փոփոխությունը կարող է հանգեցնել հողերի անապատացման, փոփոխությունը բացասական ազդեցություն կարող է գործել բնակչության առողջության վրա և այլն: